*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ « __________ »2025թ. N __-Ն

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 268-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով.

*Երևան քաղաքի ավագանին որոշում է.*

1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

**2025թ. ________ « »**

**Երևան**

**ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 268-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեում իրականացնել հետևյալ փոփոխությունը.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի NN 546-Ն և 568-Ն, մայիսի 29-ի NN 680-Ն և 681-Ն որոշումները՝ նախատեսվում է պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների կատարման բյուջեն ավելացնել 541,250.3 հազ. դրամով, որն արդեն ըստ պետական հատվածի ավելացման կամ կրճատման կարտացոլվի Երևան քաղաքի բյուջեի ծախսային մասում, մասնավորապես.

- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագրից նվազեցնել՝ 236,964.4 հազ.դրամ:
- Պետական աջակցությամբ իրականացվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում ծրագրին ուղղել 742,352.8 հազ.դրամի չափով գումար՝ Կենտրոն վարչական շրջանի հ.15, Աջափնյակ վարչական շրջանի հ.47, Դավթաշեն վարչական շրջանի հ.61, Էրեբունի վարչական շրջանի հ.63, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հհ.76, 77, 81, 82, 88 և 90, Նոր Նորք վարչական շրջանի հհ.109 և 110, Շենգավիթ վարչական շրջանի հհ.135 և 138, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հ.161 մսուր-մանկապարտեզների բակերի բարեկարգման աշխատանքների շարունակականությունն ապահովելու և ավարտին հասցնելու նպատակով:
- Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում ծրագրից նվազեցնել՝ 18,504.0 հազ.դրամ:

- Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում ծրագրին ուղղել 54,365.9 հազ.դրամ՝ «Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան հ.27 հիմնական դպրոց» և «Երևանի Ծովակալ Իսակովի անվան հ.132 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների սանհանգույցների վերանորոգման, «Երևանի Հովի. Շիրազի անվան հ.169 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի մասնակի վերանորոգման, «Երևանի հ.197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզդահլիճների և հանդերձարանների հիմնանորոգման նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի _____________-ի
N ____-Ն որոշման

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 268-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝ | | **541,250.3** | **541,250.3** | **-** |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390) այդ թվում՝ | 7400 | **541,250.3** | **541,250.3** | **-** |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342 + տող 1343) այդ թվում՝ | 7421 | **541,250.3** | **541,250.3** | **-** |
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | 541,250.3 | 541,250.3 | - |

**Հավելված N 2**
**Երևան քաղաքի ավագանու**
**2025 թվականի ___________-ի**
**N ___-Ն որոշման**

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 268-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | **541,250.3** | **541,250.3** | **-** |
| 2600 | **06** | **0** | **0** | **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | **(236,964.4)** | **(236,964.4)** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2640 | **06** | **4** | **0** | ***Փողոցների լուսավորում*** | **(236,964.4)** | **(236,964.4)** | **-** |
| | | | | որից՝ | | | |
| 2641 | 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | (236,964.4) | (236,964.4) | - |
| 2900 | **09** | **0** | **0** | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** | **778,214.7** | **778,214.7** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2910 | **09** | **1** | **0** | ***Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն*** | **742,352.8** | **742,352.8** | **-** |
| | | | | որից՝ | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 742,352.8 | 742,352.8 | - |
| 2960 | **09** | **6** | **0** | ***Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ*** | **35,861.9** | **35,861.9** | **-** |
| | | | | որից՝ | | | |
| 2961 | 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | 35,861.9 | 35,861.9 | - |

**Հավելված N 3**
**Երևան քաղաքի ավագանու**
**2025 թվականի __________-ի**
**N ___-Ն որոշման**

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 268-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **541,250.3** | **541,250.3** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4050 | **Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ**[ա] | x | **541,250.3** | **541,250.3** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4500 | **1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | x | **54,365.9** | **54,365.9** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4540 | **ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ** | x | 54,365.9 | 54,365.9 | - |
| | որից՝ | | | | |
| 4541 | Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4655 | 54,365.9 | 54,365.9 | - |
| 4600 | ***1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ*** | x | **(18,504.0)** | **(18,504.0)** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4630 | ***ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ)*** | x | (18,504.0) | (18,504.0) | - |
| | որից՝ | | | | |
| 4634 | -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | (18,504.0) | (18,504.0) | - |
| 4700 | ***1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*** | x | **505,388.4** | **505,388.4** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4760 | ***ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*** | x | **505,388.4** | **505,388.4** | **-** |
| | որից՝ | | | | |
| 4761 | -Այլ ծախսեր | 4861 | 505,388.4 | 505,388.4 | - |

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի _______________-ի
N ___-Ն որոշման

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 268-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **541,250.3** | **541,250.3** | **-** |
| 2600 | **06** | **0** | **0** | **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | | **(236,964.4)** | **(236,964.4)** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2640 | **06** | **4** | **0** | ***Փողոցների լուսավորում*** | | **(236,964.4)** | **(236,964.4)** | - |
| | | | | որից՝ | | | | |
| 2641 | 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | | (236,964.4) | (236,964.4) | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***4. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագիր (պատվիրակված լիազորություններ)*** | | ***(236,964.4)*** | ***(236,964.4)*** | **-** |
| | | | | -Այլ ծախսեր | 4861 | (236,964.4) | (236,964.4) | **-** |
| 2900 | **09** | **0** | **0** | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** | | **778,214.7** | **778,214.7** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2910 | **09** | **1** | **0** | ***Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն*** | | **742,352.8** | **742,352.8** | - |
| | | | | որից՝ | | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | | 742,352.8 | 742,352.8 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***5. Պետական աջակցությամբ իրականացվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում*** | | ***742,352.8*** | ***742,352.8*** | **-** |
| | | | | -Այլ ծախսեր | 4861 | 742,352.8 | 742,352.8 | **-** |
| 2960 | **09** | **6** | **0** | ***Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ*** | | **35,861.9** | **35,861.9** | - |
| | | | | որից՝ | | | | |
| 2961 | 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | | 35,861.9 | 35,861.9 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***4. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում (պատվիրակված լիազորություններ)*** | | ***(18,504.0)*** | ***(18,504.0)*** | **-** |
| | | | | -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | (18,504.0) | (18,504.0) | **-** |
| | | | | ***7. Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում (պատվիրակված լիազորություններ)*** | | ***54,365.9*** | ***54,365.9*** | **-** |
| | | | | -Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին | 4655 | 54,365.9 | 54,365.9 | **-** |

Հավելված N 5
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի _____________-ի
N ___-Ն որոշման
*Աղյուսակ N 1*

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 268-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում` (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **541,250.3** | **541,250.3** | **-** |
| 2600 | **06** | **0** | **0** | **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | | **(236,964.4)** | **(236,964.4)** | **-** |
| | | | | այդ թվում` | | | | |
| 2640 | **06** | **4** | **0** | ***Փողոցների լուսավորում*** | | **(236,964.4)** | **(236,964.4)** | **-** |
| | | | | որից` | | | | |
| 2641 | 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | | (236,964.4) | (236,964.4) | - |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***4. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագիր (պատվիրակված լիազորություններ)*** | | ***(236,964.4)*** | ***(236,964.4)*** | **-** |
| | | | | -Այլ ծախսեր | 4861 | (236,964.4) | (236,964.4) | |
| 2900 | **09** | **0** | **0** | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** | | **778,214.7** | **778,214.7** | **-** |
| | | | | այդ թվում` | | | | |
| 2910 | **09** | **1** | **0** | ***Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն*** | | **742,352.8** | **742,352.8** | **-** |
| | | | | որից` | | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | | 742,352.8 | 742,352.8 | - |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***5. Պետական աջակցությամբ իրականացվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում*** | | ***742,352.8*** | ***742,352.8*** | **-** |
| | | | | -Այլ ծախսեր | 4861 | 742,352.8 | 742,352.8 | |
| 2960 | **09** | **6** | **0** | ***Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ*** | | **35,861.9** | **35,861.9** | **-** |
| | | | | որից` | | | | |
| 2961 | 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | | 35,861.9 | 35,861.9 | - |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***4. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում (պատվիրակված լիազորություններ)*** | | ***(18,504.0)*** | ***(18,504.0)*** | **-** |
| | | | | -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | (18,504.0) | (18,504.0) | |
| | | | | ***7. Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում (պատվիրակված լիազորություններ)*** | | ***54,365.9*** | ***54,365.9*** | **-** |
| | | | | -Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին | 4655 | 54,365.9 | 54,365.9 | |